

34728



уфкштене гсаште

уфкштене

уфкштене

уфкштене

1500

Թագու Մեջ Կրուեցու

Դաշնագրութիւնս այս կատարեցաւ յերեսուն և մին Յունուարի մի Հա-
 զար ինն Հարիւր թուականին ի մէջ Կալկաթացի Յարութիւնի Գրիգոր Աբգա-
 րեան, և Աբգարու Աղէքսանդր Աբգարեան, որք գործեն ի միասին ընկերութեամբ
 ի 19 թիւ Ռազհա-բազար փողոցին Կալկաթու, ընդ անուամբ ԱԲԳՍՐ և ԸՆԿԵՐՈՒ-
 ԹԵԱՆ կամ Հաստատութեան (որք ի ստորև կոչեսցին Աւանդատուք) ի միոյ կող-
 մանէ՝ և ի մէջ Կալկաթացի Ալբերտ Բրմինգհամ Միլլըր Ասպետին, որ կարգեալն է
 Պաշտօնական Աւանդապահ Բէնգալայի, (որ ի ստորև կոչեսցի Պաշտօնական Ա-
 վանդապահ) զորոյ անուն, որպիսի կարգն ընդունելի առնէ՝ յաջորդք իւր կրելոց
 են ի պաշտօնի ի միւս կողմանէ: Որպէս Աւանդատուքն ի ժամանակի փոխանց-
 ման ի ձեռս Պաշտօնական Աւանդապահին՝ լիազօր տէր էին ի ներքոյ լիշատա-
 կեալս քսան Հազար ռուփեաց Տէրութեան մուրհակաց լիշելոց յառաջին Յաւելուա-
 ծին (Շէդիու), ճիշտ այնպէս՝ որպէս թէ իւրեանց սեպհական ստացուածքն էին, և
 զի Աւանդատուքն Հաճելով տալ յաւանդ Պաշտօնական Աւանդապահին զվերոյի-
 շեալ մուրհակն Տէրութեան ըստ ի ներքոյլիշեալ դաշանցն վերաբերելի սմին,
 ի փնւս Աստուծոյ, յերախտագիտութիւն և ի գոհութիւն այնոցիկ անձանց՝ որք
 անուանեալք և լիշատակեալք են ընդ սմին կցորդ յերկրորդ Յաւելուածին
 (Շէդիու): Պաշտօնական Աւանդապահն զիջաւ ի թախանձանս նոցա և Հաճեցաւ
 ընդունիլ յաւանդ զլիշատակեալ մուրհակն Տէրութեան ի վեր անդր ասացեալ
 պահեստին և ըստ այնմ՝ լիշատակեալ մուրհակքն Տէրութեան ի նմին ժամու փո-
 խանցեցան և յանձնեցան Պաշտօնական Աւանդապահին, որպէս նա ինքն այսու
 խոստովանի: Վասն այսորիկ կարգադրեցաւ ի մէջ Աւանդատուաց և Պաշտօնական
 Աւանդապահին զի՝ Պաշտօնական Աւանդապահն պարտաւոր է մուծանել զմանրա-
 մասնութիւնս Հաշուոց լիշեալ մուրհակաց Տէրութեան ի Տումարս իւր, որ կրես-
 ցէ զմակագրութիւնս զայս՝ Ա.Ի.Ա.Ն.Գ. ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՍԵԹԱՅ ՅԱՐՈՒԹԻԻՆ ԱԲ-
 ԳՍՐԵԱՆ և լիշեալ աւանդն յետ այսու ծանուցի և յատկացի այսպիսի նպատա-
 կաւ: Քանզի լիշեալ մուրհակքն Տէրութեան ի միասին չարժէին առաւել քան
 զտասն ինն Հազար և մի Հարիւր ռուփիս ըստ արժէից գնոյ վաճառանոցին այ-
 սօրեան ամսաթուոյ, յորժամ Դաշնագիրս այս Հաստատուր և որպէս այժմ ևս նոյն
 Դաշնագիր ցուցանէ, որոյ վասն ընդունելի և յայտնի եղև ըստ յետագային:

Ա. Պաշտօնական Աւանդապահն տէր լիցի վերասացեալ մուրհակաց Տէրու-
 թեան քսան Հազար ռուփեաց, որ լիշատակեալն է յառաջին ասացեալ Յաւելուա-

ՔԻԿԵ



ծին (Շեղիու) և գործադրելոց է զայն ըստ նպատակի աւանդին, այսինքն՝ պարտ է նմա գոյացուցանել յիրաքանչիւր կիսամեկին զեկամուտս յառաջ եկեալս ի նոյն մայր գումարոյ, և յայսմ կիսամեայ եկամտէն ի բաց բառնալ զիւր միջնորդէս (կուսիսան), բաժանել զայդ մնացեալ կիսամեայ եկամուտ յերիս հաւասար մասունս, յորոց զմի մասն կամ զմի երրորդն այս եկամտի Աւանդին հատուցանել պարտ է նմա յիրաքանչիւր կիսամեկի յայնժամանակեան Կառավարչաց կամ Յանձնաժողովին Կալկաթու Նազարեթայ Եկեղեցւոյ Հայոց, որ կարգեալն է ըստ Սահմանադրութեան հաստատելոյ և վաւերացելոյ ի Բարձրագոյն Ատենէն Կալկաթու յՁ՝ Սեպտեմբերի մի հազար ութն հարիւր ութսուն ինն թուականին, ի 413. Թիւ Ատենադրութեանն 1888. ամի, այսպիսի եկամուտ մատակարարելի է ի յիշեալ Կառավարչաց կամ ի Յանձնաժողովէն այն եղանակաւ և ձևով՝ որպիսի ի ստորեւ բացայտեալն է. իսկ վասն միւս երկուց հաւասար երրորդական մասանց այսպիսի եկամտոց, որ ի վերայ Աւանդին, կարգադրեալ է զի՝ զնոյն եկամուտ յամենայն կիսամեկի առ վեց ամիսն մի անգամ միջոցաւ ԲԵՆԳԱԼ բանքի և կամ ո՛ր երկուց ամիսն մի անգամ միջոցաւ ԲԵՆԳԱԼ բանքի և կամ ի Ջուղա (նորն) ի Պարսկաստան ի ձեռս Յանձնաժողովին բաղկացելոյ ի հինգ անձանց, որք նշանաւորեալք իցեն ըստ ի ներքոյ յիշատակելոցն և կարող լիցին մատակարարել զեկամուտսն համեմատ այնց՝ որպէս ի ստորեւ նշանակին:

Բ, Հարկ է վերլիշեալ Կառավարչաց Կալկաթու Նազարեթայ Ս. Եկեղեցւոյ Հայոց կամ Յանձնաժողովին իբրև ստանալի մուծանել զամենայն դրամսն հատուցանելիս ինքեանց ի Պաշտօնական Աւանդապահէն ի Տումարս ասացեալ Եկեղեցւոյ, որպէս ի վեր անդր յիշեցաւ, որոշ որոշ և յատուկ հաշուով. նաև յիշատակել ի Տումարս յականէ յանուանէ զանուանս ամենեցուն, որք անուանեալք և նկարագրեալք իցեն ընդ սմին կցորդ յերկրորդ Յաւելուածին (Շեղիու) ի յիշատակ անձանց այնոցիկ յամենայն ամի ծախսեցեն զգումարն քսան և հինգ ուսուիեաց վասն տալոյ զճաշ աղքատաց բնակելոց ի Կալկաթա ի Տանն Հայոց Բարեգթութեան, նաև այլ հայ աղքատաց Կալկաթու տացեն ճաշ յայնպիսի աւուրս և ի տեղառջ, ուր վիճակաւոր Քահանայք վերլիշեալ Նազարեթայ Եկեղեցւոյ Հայոց որոշեցեն և պատշաճ համարեցին՝ հատուցեն և բաժանեցեն ի յիշատակ այնոցիկ անձանց նըշանակելոց ընդ սմին կից յերկրորդ Յաւելուածին (Շեղիու) զմի և կէսն ի մնացորդ գրամոց անտի՝ հասակաւոր Հայ աղքատաց և Հայ որբոց Կալկաթու երկիցս ի տարւոջ, զմին ի շաբաթու Հայոց տօնի Ծննդեան Քրիստոսի և զմիւսն՝ ի շաբաթու, որ է յառաջ քան զաւագ շաբաթ և զՉատիկն Հայոց: Եւ դարձեալ ի յիշատակ նախասացեալ անձանց տացեն նոքա զկէս մնացորդ գումարոյն զհատուցանելին ինքեանց ի Պաշտօնական Աւանդապահէն այնպիսի պաշտօնատար Քահանայից Կալկաթու Նազարեթայ Եկեղեցւոյն Հայոց՝ որք յաղքատ և ի կարօտաւոր վիճակի գտանիցին և ի պարտականութեան և անկարող լիցին վճարումն առնել

պարտուց իւրեանց (եթէ պարտս ունիցին) և հայթայթել զտարուստ կամ զճանապարհածախս իւրեանց, այնոցիկ՝ որոց եկեալ իցեն ի Կալկաթա ի Ջուղայէ (նորն) կամ յայլ տեղեաց:

Գ. Մին ի չորից անդամոց Յանձնաժողովին բաղկացելոյ ի հինգ անձանց, որոյ նկատմամբ յիշատակեցաւ ի վեր անդր, եթէ կարելի է՝ պարտ է լինել ի սերընդոց Աբգար-Աղազար Սէթայ, որ և նշանակեցի ընդհանուր ժողովով Հայ Հասարակութեան Ջուղայու (նորն) տեղի կալելոյ ընդ Եկեղեցական իրաւասութեամբ Կաթողիկոսին ամենայն Հայոց ուղղափառաց և այսպիսի ժողովոյն նախագահեցէ այնր ժամանակի Արք Եպիսկոպոսն կամ Եպիսկոպոսն Թեմին Հայոց. իրաւամբ ներկայ լիցին յայսմ ժողովի և Քահանայք ընդհանուր Հայ Հասարակութեան Ջուղայու (նորն) առ ի տալ զքուէս իւրեանց. և մին յանդամոց Յանձնաժողովին պարտէ լինիլ յայնժամեան Աւագ Քահանայն Ս. Մարիամ (Աստուծածնի) Եկեղեցւոյ Ջուղայի (նորն), այլ եթէ լինչ և իցէ ժամանակ՝ յիշեալ Ս. Մարիամ (Աստուծածնի) Եկեղեցին դադարեցի ի գոյութենէ՝ Աւագ Քահանայ այլ մի Եկեղեցւոյ Հայոց Ջուղայի (նորն), որ իցէ ընդ իրաւասութեամբ Կաթողիկոսին ամենայն Հայոց՝ որպէս ասացաւ յառաջագոյն, ընտրեցի ի միւս Անդամոց Յանձնաժողովին, իսկ ի դէպս՝ եթէ չիցէ անգամ այսպիսի Եկեղեցի մի ի Ջուղա (նորն) Աւագ Քահանայն այլ Եկեղեցւոյ գտելոյ այլուրեք՝ որ նոյնպէս ընդ իրաւասութեամբ ամենայն Հայոց Կաթողիկոսին իցէ, կարող է անուանիլ ի միւս Անդամոց Յանձնաժողովին: Երկուքն կամ առաւել քան զերկուսն յԱնդամոց Յանձնաժողովին կազմելոց են զմեծամասնութիւն, և երբ յիշեալ Քահանայն իւր պաշտօնի զօրութեամբ, որպէս Անդամ Յանձնաժողովին ներկայ գտցի անդ՝ նա նախագահ լիցի Յանձնաժողովին:

Դ. Յանձնաժողովն, որոյ ի մասին յիշեցաւ յերրորդ պարբերութեան Սորին, զանձնեցէ զամենայն դրամսն, զորս ստանալոց է ինքն ի Պաշտօնական Աւանդապահէն և մուծցէ զայնս ի Տումարս որոշ որոշ և յատուկ արձանագրութեամբ. յորս արձանագրեցէ զանուանս անձանց անուանեալ և նկարեալ ընդ սմին կցորդ յերկրորդ Յաւելուածին, (Շեղիու) և ի յիշատակ այնոցիկ անձանց հատուցեն և բաշխեցեն զմի կէսն յայնպիսի դրամոց ի մէջ հասակաւոր և տառապեալ Հայ աղքատաց կամ Հայ որբոց Ջուղայու (նորն), որպէս յօգնականութիւն: Իսկ վասն միւս կէս մասին այսպիսի դրամոց՝ գործադրեցեն զայն ի հատուցումն կամ ի վարձատրութիւն այնպիսի հմուտ բժշկաց կամ դեղագործաց ձրի հիւանդանոցի կամ դեղատան, որք պահին և կառավարին յուղղափառ Հայոց (եթէ յայսպիսեաց առաւել քան զմի լինիցին՝ այնօքիկ ընտրութեամբ Յանձնաժողովին պարտին լինիլ): Հիւանդանոց կամ դեղատունն՝ եթէ ի նոյն ժամանակի ի գոյութեան կայցէ կամ յապագայումն հաստատեցի, ուր քրիտոսնեայ հիւանդք յարական և յիգական սեռից պատսպարեցին և խնամեցին ձրիաբար, այսինքն՝ պարտին նոքա ազատ մնալ

յամենայն վճարմանց և զի հիւանդանոցն կամ դեղատունն բաշխեսցէ ձրիապէս զդեղորայս այնպիսի անձանց ևս՝ որք ո՛ր և իցէ պատճառօք անկարող լիցին անձամբ ներկայանալ ի նոյն հիւանդանոց կամ ի դեղատունն, և կամ վերջին մնացորդ գումարով գնեսցեն վասն նոցա զդեղորայս և զայլ բժշկական միջիթարուծիւնս և այլն: ի պէտս այսպիսի Հիւանդանոցի կամ դեղատան Յանձնաժողովն այն պատ-
 րաստեսցէ զպղնձեայ տախտակ մի վասն յիշատակարանի, որ իցէ երկու ոտն և մի կոճ յերկայնութիւն, մի ոտն և վեց կոճ ի լայնութիւն, քառորդ կոճ մի ի հաս-
 տութիւն հանդերձ շրջանակաւ, և զոր գետեղեսցեն յակներև տեղուջ միում ի ճակատու այնպիսի Հիւանդանոցի կամ դեղատան՝ որ կրեսցէ զհետագայ արձա-
 նագրութիւնս զայս՝

- « Ի փառս Աստուծոյ և ի յիշատակ Սէթայ Յարութիւն Աբգա-
- « րեան և իւր կնոջ Սարրայի, և Յարութիւնի Աբգարեան և
- « իւր կնոջ Կատարինեայ-ծնողաց լիշեալ Սէթայ Յարութիւն
- « Աբգարեան և Եղիսաբեթի Կաւիթ Կասէնեան, նորա ամուս-
- « նոյ և զաւակաց իւրեանց:

Եթէ չիցէ այնպիսի ձրի Հիւանդանոց կամ դեղատուն ի Ջուղա (նորն) և մինչչև լեալ ձրի Հիւանդանոցին կամ դեղատան այսպիսուոյ, Յանձնաժողովն, եթէ կարելի է, գաշնադիր լիցի ընդ այնպիսի բժշկի՝ որ հմուտ իցէ յախտագիտութեան, ի գը-
 րութեան դեղատոմսից և ի պատրաստութեան դեղորէից և բժշկական միջիթարու-
 թեանց՝ որք մատակարարելոցն են Հայ հիւանդաց Ջուղայի (նորն): Յանձնաժողո-
 վըն ի գործ դիցէ զերկրորդ վերոյիշալ կէս մասն դրամագումարոց ի բաշխումն,
 որպէս օգնականութիւն առ Հայ հասակաւոր աղքատս կամ որքս Ջուղայի (նորն),
 իմա՛ առ գաղթականութիւնս Հայոց տեղուոյն Ջուղայի (նորն):

Ե. Ընկալագիր անձանց այնոցիկ՝ որք ունիցին զիրաւունս ստանալոյ ի Պաշ-
 տօնական Աւանդապահէն զո՛ր և իցէ մասն եկամտոց աւանդադրամոց լիշելոց, բա-
 ւական է ազատ կացուցանել ի պարտուց զՊաշտօնական Աւանդապահն: Ուստի
 չէ պարտ Պաշտօնական Աւանդապահին տեսանել միշտ զգործադրութիւն եկամ-
 տին պայմանաւ՝ որպէս այսու յայտ լինիցի, զի Պաշտօնական Աւանդապահն ա-
 զատ լինելոց է յո՛ր և իցէ ժամանակս անկախ խոհականութեամբ իւրով յետաձգել
 կամ գաղաղակեցանել զհատուցումն մասին ինչ եկամտոց աւանդադրամոցն լիշե-
 լոց առ անձինս այնոսիկ՝ որք թէև իրաւունս ունիցին ստանալ զայն ի ժամանա-
 կին, այլ կանոնադանց լեալ իցեն ի կառավարութիւնս մատակարարութեան ասա-
 ցեալ դրամոց կամ ի պայմանս պարունակեալս ի սմին, մինչչև այն կառավարու-
 թիւնք կամ պայմանք կատարելապէս իցեն գործադրեալք և այլ անձինք չիցեն
 որոշեալք և կարգեալք հաւանութեամբ Պաշտօնական Աւանդապահին ընդունիլ
 զլիշեալ եկամուտն դաշամբ՝ զի միշտ իրաւունս ունիցի Պաշտօնական Աւանդապահն
 իւր անկախ խոհականութեամբ հատուցանել զամբողջ կամ զմասն ինչ դրամոց

պահեալս առ ինքն ի պատճառս պայմանազանցութեան ո՛ր և իցէ այլոց անձանց,
 որք ունիցին զիրաւունս ստանալոյ զմի բաժին յեկամտից լիշեալ աւանդադրամոյ
 (մատակարարելի ի նոցանէ ըստ աւանդից այլոց դրամոց և հատուցանելի ինքեանց)
 ցորչափ ժամանակս լիշեալ կանոնազանցութիւնն շարունակեսցի և կամ մինչչև
 այլ անձինք ըստ վերլիշեալ պայմանաց իցեն ընտրեալք ի տեղի կանոնազանցից
 գործողաց զվնասս, ահաւասիկ այսու բացատրեալ լիցի, զի զանցաւորութիւն պահե-
 լոյ զատուկ հաշիւս, որպէս յառաջ քան զայս ասացաւ, առ ի մուծանել ի նոսին
 զանուանս լիշեալ անձանց անուանելոց և նկարագրելոց ընդ սմին կցորդ յերկրորդ
 յաւելուածին (Շեղիու) համարեսցի օրինազանցութիւն ընդդէմ պայմանաց, և յոր-
 ժամ այսպիսի օրինազանցութիւն յայտնի լիցի Պաշտօնական Աւանդապահին՝ նմա
 անկ է յետաձգել առ ժամանակ ինչ զհատուցումն եկամտի լիշեալ աւանդադրա-
 մոյ, ըստ որում այնպիսի կանոնազանցութիւն պատահեալ է և հատուցանել այ-
 լոց անձանց, որոց ունիցին իրաւունս ստանալոյ զմի բաժին յեկամտից աւանդա-
 դրամոյն յիշատակելոյ, որք ի կիր արկանիցին ըստ այնմ, որպէս յառաջագոյն
 ասացաւ:

2. Չէ պարտ Պաշտօնական Աւանդապահին հատուցանել զկիսամեայ եկա-
 մուտն լիշեալ աւանդադրամոյ այնոցիկ անձանց՝ որոց հատուցանելի էր այն, մինչ-
 դեռ Պաշտօնական Աւանդապահն չիցէ ստացեալ զԸնկալագիր վասն նախաշա-
 տակեալ կիսամեայ եկամտոյ բաժնին: Ամենայն Ընկալագրեան հատուցանելի դրա-
 մոց ըստ աւանդից այսոցիկ կրելի են յինքեանս զմակագրութիւնս՝ ԱՒԱՆԻ ՈՂՈՐ-
 ՄՈՒԹԵԱՆ ՍԵԹԱՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԲԳԱՐԵԱՆ:

Ե. Յապագայ ժամանակս ինչ ի դէպս յայն եթէ՝ Պաշտօնական Աւանդա-
 պահն անկարող լիցի գործադրել զմին յո՛ր և իցէ յաւանդից յայտարարելոց ի սմին
 ի վեր անդր, այն պատճառաւ՝ զի չիցէ ի ժամանակին յայնմիկ գործ այսպիսի ա-
 ւանդի կամ աւանդից՝ Պաշտօնական Աւանդապահն լընթացս այնր ժամանակի և
 առ տակասութեան նոյնպիսի նպատակի, որպէս յառաջագոյն ասացաւ, պարտ է
 ի կիր արկանել և բաշխել զեկամուտ աւանդադրամոյն, յորում այսպիսի թերու-
 թիւն պատահիցի, քանի կամ մի եղանակաւ, որ որոշելի է զկնի սորին, այսինքն՝
 ի մէջ հասակաւոր աղքատ Հայոց և կամ հայ որբոց, մանաւանդ այնոցիկ՝ որք
 գտանիցին ի Կալկաթա կամ ի Պարսկաստան, և ի չլինիլն այսպիսի հասակաւոր
 աղքատ Հայոց և հայ որբոց՝ յայնժամ իրաւունս ունիցի նա բաժանել զլիշեալ
 եկամուտս ի մէջ ո՛ր և իցէ աղքատաց քրիստոնեայ ազգի եղելոյ ի Կալկաթա:

Ը. Ի դէպս յայն՝ եթէ վերոյիշեալ մասն կամ մասունք յառաջ քան զայս
 յայտարարեալ եկամտի աւանդադրամոյ անվաւեր համարեսցին ի կողմանէ Յրինա-
 ւոր Ատենի, յայնժամ Պաշտօնական Աւանդապահն կարող է տէր կանգնիլ Կրա-
 մագլխոյն այնմիկ՝ յորմէ ելանէին այդպիսի եկամուտք, և զկիսամեայ եկամուտս

դորին գործադրել վասն վերոյիշեալ աւանդիցն այնոցիկ՝ որք չեն համարելոց ան-
վաւեր, և զորս ինքն Պաշտօնական Աւանդապահն ի ժամանակս ժամանակս յար-
մար դատեսցի և որոշիցէ:

Թ. Յիշեալ Աւանդադրամն յետ այսու մշտապէս պարտի դնիլ և պահիլ
ի վերայ մուրհակաց Տէրութեան Հնդկաստանի կամ ի վերայ երաշխաւորեալ թղթոյ
Դրամագլխոյ ո՛ր և իցէ երկաթուղւոյ, կամ ի վերայ երաշխաւորեալ Դրամագլխոյ
Հնդկաստանի կամ միացեալ Թագաւորութեան մեծին Բրիտանիոյ և Պաշտօնա-
կան Աւանդապահն ազատ լիցի ընդ ժամանակս ժամանակս փոխել և տեղափո-
խել զյիշեալ Աւանդադրամն:

Ժ. Որոշակի յայտարարեալ լինի զի՝ այս է վաւիագ Աւանդատուացն, որ
յիշեալ Աւանդադրամք պարտին միշտ մնալ ընդ իշխանութեամբ Պաշտօնական
Աւանդապահին, Յաջորդի կամ Յաջորդաց նորա, որք իցեն ի պաշտօնի, կամ այլ
պաշտօնէի այնպիսոյ՝ որ կարգեսցի ի Կառավարութենէն գործել նոյնանման կա-
րողութեամբ. կամ ընդ իշխանութեամբ Կառավարութեանն Հնդկաստանի և կամ
միացեալ Թագաւորութեան մեծին Բրիտանիոյ. և ի դէպս՝ եթէ Աւանդապահու-
թիւնս այս Ընծայագրի փոխանցեսցի ի ձեռս այլ պաշտօնէի կամ անձին՝ յիշեալ
մուրհակք Տէրութեան պարտին մնալ ընդ իրաւասութեամբ Բարձրագոյն Ատենի
Բրիտանական Հնդկաստանի և կամ ընդ իրաւասութեամբ Բարձրագոյն Ատենին
Անգլիոյ:

ԺԱ. Եթէ յո՛ր և իցէ ժամանակի փոփոխութիւն տեղի ունիցի ի գործողութեան
Պաշտօնական Աւանդապահին կամ վասն այլ ինչ պատճառի յայնժամ ապօրինի
համարեսցի Պաշտօնական Աւանդապահին գործել որպէս զԱւանդապահ սոյն այս
Ընծայագրի, կամ եթէ պաշտօն Պաշտօնական Աւանդապահին խափանեսցի և ի-
տեղի նորին չընտրեսցի ի Կառավարութենէն պաշտօնեայ այլ ոք նոյն կարողու-
թեամբ և զօրութեամբ գործել, յիշեալ Աւանդադրամք չպարտին փոխանցիլ ի-
ներքոյ որ և է հանգամանաց ի ձեռս մասնաւոր անձնաւորութեանց՝ որպէս Ա-
ւանդապահից, այլ պարտ է փոխանցել ի ձեռս Պաշտօնատարաց, այսինքն՝ այնր
ժամանակի Կառավարչաց և Յանձնաժողովին Կալկաթու Նազարեթայ Եկեղեցւոյն
Հայոց, որք ընտրեցան ըստ Սահմանադրութեանն վաւերացելոյ ի Բարձրագոյն
Ատենէ յերկրորդ աւուր Սեպտեմբերի մի հազար ութ հարիւր ինն թուականին
ի 413. № Դատաստանագրի 1888. ի: Յիշեալ Աւանդադրամք փոխանցեսցին և
դարձուցին յանուն վերիշեալ ամենայն պաշտօնատարաց այնր ժամանակի և Ա-
ւանդադրամքն պահեալք լիցին ձեռամբք նոյն Պաշտօնատարաց ի վերայ Աւան-
դից յայտարարելոց Ընծայագրովքս այսօրիւք, որպէս թէ յիշեալ Պաշտօնակատարք
կարգեալ լինէին նախկին Աւանդապահք ի տեղի Պաշտօնական Աւանդապահին,
և եթէ հնարաւոր է՝ պարտի ի ձեռս բերել զհրաման ինչ ի Բարձրագոյն Ատե-

նէն, որով հաստատեսցէ զփոխանցումն Աւանդին ի ձեռս յիշեալ Պաշտօնատա-
րաց: Եւ ահա այսու յայտարարեալ լինի, զի մին ի պայմանաց Աւանդիս այսորիկ
է այս, զի ի դէպս՝ եթէ այս յօդուածս գործադրեսցի, մուրհակք Տէրութեան
այնր ժամանակի, որք ներկայացուցեն զԱւանդադրամն, պարտին դնիլ և պա-
հիլ ընդ միշտ ի Դրամատան Բէնկալայի կամ այլ Դրամատան, յորում ժամանա-
կաւորապէս գրամք և գանձք Կառավարութեանն պահեալ լինին, և զորս չէ պարտ
տեղափոխել անտի առանց հրամանի Բարձրագոյն Ատենին Կալկաթու և Ստացա-
գրեանն Դրամատան պահեալ լիցին յԱւանդատան Եկեղեցւոյ:

ԺԲ. Պաշտօնական Աւանդապահն ունիցի իրաւունս ստանալոյ ի վարձ աշ-
խատութեան իւրոյ վերաբերելի Աւանդից ըստ այնմ պայմանի Օրինագրին՝ որոյ
քանակութիւնն որոշեալ է ի 1864. թուոյ և ի № 17. ի 11. երրորդ յօդուա-
ծին իբրև Աւանդապահ կարգեալ համաձայն 10. երրորդ յօդուածի Օրինագրին:

Առաջին Յաւելուած (Շէղիու)

Մուրհակք Տէրութեան.

№ 068792.	փոխատուութիւն 3՛ առ հարիւր, 1. Փետրուար 1843. ուռփիք	10,000
№ 114434.	փոխատուութիւն 3՛ առ հարիւր, 1. Մայիս 1865. ,,	10,000
		<u>Ռուփիք 20,000</u>

Երկրորդ Յաւելուած (Շէղիու)

Ի յիշատակ Սէթայ Յարութիւն Աբգարեան և իւր կնոջ Սարրայի, Յա-
րութիւնի Աբգարեան և իւր կնոջ Կատարինեայ-Ծեռոյաց յիշեալ Սէթայ Յարու-
թիւն Աբգարեան, Եղիսաբեթի այլուոյ Հանգուցեալ Դաւիթ Գասէնի, զոր յիշեալ
Սէթ Յարութիւն Աբգարեանն և իւր կին Սարրայն որդեգրեցին, նորա ամուս-
նոյ և նոցին զաւակաց:

Ի վկայութիւն որոյ յիշեալ Ընկերք եղին զձեռս և զկնիքս ի վերայ
այսոցիկ Ընծայագրոց ի վերոյիշեալ առաջնում աւուր տարւոյ:

Ստորագրեաց, կնքեաց և յանձնեաց վերոյիշեալ Յարու-
թիւն Գրիգոր Աբգարեան ի ներկայութեան . . . (ձեռ.) Յ. Գ. Աբգար

(ձեռ.) Կ. Մ. Գնքան Հաւրա.

Օգնական Աբգար և Ընկերութեան.

(ձեռ.) Ս. Ստեփաննոս 155. Լորր Սրբիւլէր ուղ.

Օգնական Աբգար և Ընկերութեան.

Ստորագրեաց, կնքեաց և յանձնեաց վերոյիշեալ
Աբգար Աղէքսանդր Աբգարեան ի ներկայութեան (ձեռ.) Ա. Ա. Աբգար.

(ձեռ.) Կ. Մ. Դնքան Հաւրա.
Օգնական Աբգար Ընկերութեան.

(ձեռ.) Ս. Ստեփաննոս 155. Լօրր Սըքիւլէր ուղ.
Օգնական Աբգար Ընկերութեան.

Ստորագրեաց, կնքեաց և յանձնեաց վերոյիշեալ
Ալբէրդ Բրմինգհամ Միլլըր (ձեռ.) Ա. Բ. Միլլըր.

(ձեռ.) Մօհէնդրա Նաթ Դա
Դպիր Բէնկալալի Աւանդապահին:

Ստացայ ի վերոյիշեալ Յարութիւնէ Գրիգոր Աբգարեան և յԱբգարէ
Աղէքսանդր Աբգարեան զի ներքոյ յիշատակեալ մուրհակսն Տէրութեան, որք
փոխանցեցան յանուն իմ.

№ 068792. փոխատուութիւն 3 ² առ հարիւր 1. Փետրուար 1843. ուս. փիք 10,000	
№ 114434. փոխատուութիւն 3 ² առ հարիւր 1. Մայիս 1865. ,, 10,000	
	<u>Ռուսիք 20,000</u>

(ձեռ.) Ա. Բ. Միլլըր
Բէնկալալի Պաշտօնական Աւանդապահ

Ներկայացուցաւ վասն արձանագրութեան ի Գրասենեակն յիշատակա-
գրութեան Կալկաթայի ի 12. րորդ և ի 1. Ժամուն լետ միջօրէի յառաջներորդ
աւուր Փետրվարի 1900. թիւ ի Կալկաթայի Վաճառական Յարութիւնէ Գրիգոր
Աբգարեան Աւանդատուէն:

Յ
(Ձեռ.) Ս. Գ. Աբգարեան.
(Ձեռ.) Պրատապա Չնդրա Գօշա.
Յիշատակաց Դպիր 1—2. 1900.

Կատարումն ընդունելի եղև ի վերոյիշեալ Աւանդատուէն և յՍ. Ա. Աբ-
գարեանէ Կալկաթայի Վաճառականաց, երկօքին Աւանդատուք և անձամբ ծա-
նօթք աստ:

Յ
(Ձեռ.) Ս. Գ. Աբգարեան,
(Ձեռ.) Ա. Ա. Աբգարեան.
(Ձեռ.) Պրատապա Չնդրա Գօշա.
Յիշատակաց Դպիր 1—2. 1900.

Գործողութիւնն Հաստատեցաւ ձեռագրութեամբ Ա. Բ. Միլլըրի Պաշ-
տօնական Աւանդապահին Բէնկալալի, որ ազատ է անձամբ ներկայանալ ի Գրա-
սենեակն Յիշատակագրութեան ըստ 1877. թուոյ Յ. րորդ գործողութեան 88.
Հատուածոյն:

(Ձեռ.) Պրատապա Չնդրա Գօշա.
Յիշատակաց Դպիր 1—2. 1900.

Թուղթ Դաշանց № 31. 1900. թուականին.

Կնիք Յիշատակաց Դպրին Կալկաթու
(Ձեռ.) Պրատապա Չնդրա Գօշա.
Յիշատակաց Դպիր 1—2. 1900.

Յիշատակագրեալ ի Զորորդ մատենի
լերրորդ Հատորին լէջ 25—38:

լինելով № 31. վասն 1900. թուականին

Կնիք Յիշատակաց Դպրին Կալկաթու.
(Ձեռ.) Պրատապա Չնդրա Գօշա.
Յիշատակաց Դպիր Կալկաթու 7—2. 1900





ՄՄ Հայագիտական գրադարան



MAL030142

